Մեզ խնդրում են տպագրել հետևեալը՝

ԿՍՉ XXX 1882—1912

Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի Մանկավարժական խորհրդի ձեռներէցութեամբ կայացած ժողովը, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, Ճեմարանի և Վաղարշապատի ծխական դպրոցների ուսուցիչներ, Սինոդի և տեղական այլ պաշտօնեաներ, տեղիս Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը և հասարակութեան բազմաթիւ անդամներ, ընտրեց մի յանձնաժողով պատշաճաւոր հանդիսով տօնելու մեր տաղանդաւոր բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանի գրական գործունէութեան երեսնամեակը։

Յոբելենական Յանձնաժողովը որոշեց այս տօնի հանդէսը կատարել առաջիկայ մայիսի 20-ին (նոր տոմարով յունիսի 2-ին)։

Յանձնաժողովը լիայոյս լինելով, որ արդիւնաշատ ուսուցիչ-բանաստեղծի յոբելեանը ջերմ արձագանք կը գտնէ ոչ միայն նորա բազմաթիւ աշակերտների և բարեկամների շրջանում, այլ և հայ հասարակութեան բոլոր խաւերում, խնդրում է նպաստել այս համակրելի տօնի յաջողութեանը։

Շնորհաւորութիւններ, ուղերձներ պէտք է ուղարկել Էջմիածին յոբելենական յանձնաժողովի նախագահ Սինոդի անդամ Տ. Բարգէն վարդապետին, (Эчміадзинъ члену Св. Синода Архимандриту Бабкену. Russie, Caucase, Etschmiatzin). *իսկ նուէրներ՝ յանձնաժողովի գանձապահ Սինոդի առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ Յովհաննէս Մուշեղեանին* (Эчміадзинъ, Чиновнику особыхъ порученій Св. Синода Ованесу Мушегянъ).

Յանձնաժողովի նախագահ Բարգէն վարդապետ
(անդամ Սինոդի).

Փոխ-նախագահ Ս. Կանայեանց (ուս. ճեմարանի).

Գանձապահ Յ. Մուշեղեանց

Քարտ. Մ. Խոսրիկեան (ուս. ճեմարանի).

Անդամներ՝

Աբել աբեղայ (ուսուցիչ ճեմարանի).

Վառվառէ Կոստանեան, (փոխնախ. Բ. Ը. Հ. ճիւղի).

Մ. Աբեղեան (ուսուցիչ ճեմարանի).

Յ. Պետրոսեան (ուսուցիչ ճեմարանի).

Հ. Տէր Մինասեան (գաւառական բժիշկ).

Ս. Էջմիածին. 10 Ապրիլի 1912.